Հայցվոր ՝ «ՄԵՆԴԻԱ ՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ
Գրանցման հասցե՝ ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ Հայաստան, ՌՈՍՏՈՎՅԱՆ Փ., 9, ԵՐԵՎԱՆ, 0020, ԵՐԵՎԱՆ
Պետական գրանցման համար՝ 278.110.1160432
Հարկ վճարողի հաշվառման համար՝ 00494862

Ներկայացուցիչ ՝ ՎԱՉԳԵՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
Գրանցման հասցե՝ ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՇԱՀՈՒՄՅԱՆ 14 Փ. 9 Տ
Ծանուցման հասցե՝ ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՇԱՀՈՒՄՅԱՆ 14 Փ. 9 Տ

Պատասխանող ՝ Եղեգիս համայնքի ավագանի ՏԻՄ
Գրանցման հասցե՝ ՎԱՅՈՑ ՁՈՐ ԵՂԵԳԻՍ գ. Շատին, 1 փող. 1
Ծանուցման հասցե՝ ՎԱՅՈՑ ՁՈՐ ԵՂԵԳԻՍ գ. Շատին, 1 փող. 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Սույն փաստաթղթի վավերականությունը կարող է ստուգվել **verify.e-gov.am** կայքում մուտքագրելով **JFXW-LYA7-0TZV-5RAC** հսկիչ համարը

ՎԴ/22653/05/25

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

05-ը հունվարի 2026 թվական

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը՝ դատավոր Լուսինե Բոյաջյան (այսուհետ նաև՝ Դատարան), ծանոթանալով «Մենդիա Ռեսուրսիս» ՍՊ

ընկերության կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին,

Պ Ա Ր Զ Ե Ց

«Մենդիա Ռեսուրսիս» ՍՊ ընկերությունը 26.12.2025 թվականին էլեկտրոնային եղանակով հայցադիմում է ներկայացրել Դատարան (Դատարանին հասանելի է դարձել 29.12.2025 թվականին) ընդդեմ Եղեգիս համայնքի ավագանու՝ խնդրելով հայցվորին 10.04.2023 թվականին տրված օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹ-29/370 թույլտվությամբ և թիվ Պ-370 պայմանագրով նախատեսված գործունեությունը 2 տարի ժամկետով երկարացման կապակցությամբ նախնական համաձայնություն տրամադրելու վերաբերյալ որոշումը:

ՈՒսումնասիրելով ներկայացված հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը, Դատարանը գտնում է, որ դրանք համապատասխանում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ, 74-րդ հոդվածների պահանջներին, ուստի ներկայացված հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ, 28-րդ հոդվածներով՝ Դատարանը գտնում է, որ պատասխանող Եղեգիս համայնքի ավագանուց անհրաժեշտ է պահանջել 27.10.2025 թվականի թիվ 96 Ա որոշման համար հիմք հանդիսացած վարույթի նյութերն ամբողջությամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 11.1 գլխով, 73-րդ, 74-րդ, 78-րդ հոդվածներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Մենդիա Ռեսուրսիս» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ Եղեգիս համայնքի ավագանու՝ 10.04.2023 թվականին հայցվորին տրված օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹ-29/370 թույլտվությամբ և թիվ Պ-370 պայմանագրով նախատեսված գործունեությունը 2 տարի ժամկետով երկարացման կապակցությամբ նախնական համաձայնության վերաբերյալ որոշումը տրամադրելուն պատասխանողին պարտավորեցնելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

2. Նախնական դատական նիստը նշանակել 2026 թվականի ապրիլի 16-ին, ժամը 15:15-ին, Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում (ք. Երևան,

Գ. Նժդեհի փողոց 23, 3-րդ հարկ, նիստերի դահլիճ թիվ 19):

3. **Եղեգիս համայնքի ավագանուց պահանջել սույն որոշումը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում Դատարան ներկայացնել 27.10.2025 թվականի թիվ 96 Ա որոշման համար հիմք հանդիսացած վարույթի նյութերն ամբողջությամբ:**

4. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր ***Լ . ԲՈՅԱՋՅԱՆ***

Digitally signed by
Name: LUSINE BOYAJYAN ARTASHI
Psn: 5109840881
Date: 2026-01-05 14:51:35